

**ՔԵՌԻՆ ՈՒ ԵԳԱՆԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
բարբառ (խոսվածք)**

Մի մարթ ու կնիկ են ըլլում: Էդ մարթը մի լավ լուծ եզնով ու մի չթով ֆող ա վարում, ապրուստ դըզում, ինքն էրեսը տենում չի, չիմ կնիկը քոռ ու փուչ ա անում, իրա սիրեկաննու հետ լափում: Էդ մարթն էլ բան չի գլխի ըլլում, մի խեղճ ու կրակ հայվանի մինն ա ըլլում: Գնում ա իրա քվոր տղին բերում, որ չութ վարելիս քոմագ անե, էդ փչացածը շատ շունն ա ըլլում, ձեռաց գլխի յա ըլլում իրա քեռեկնգա արարմունքին:

Ասում ա.— Քեռի ջան, ես ըստի կկենամ, քեզ քոմագ կանեմ:

Քեռեկինը մարթի վրա կտաղում ա, փըրփըրում, ասում ա.— Վայ տամ քու գլխին, մթամ հաց շատ ունիս որ դուն ուտես, դրան էլ ջոգ ես բերում գլխներուս խաթա՞:

Ասում ա.— Այ կնիկ, քոմագ չունիմ, բան չի կա, հլբաթ մի կտոր հաց էլ կլի, որ սա ուտե մեզ հետ:

Վերջը եզանը կենում ա իրա քեռու տանը: Մի քանի օր որ անց ա կենում, դա բուսու ա պիւր, տենում ա, որ իրա քեռեկինը իրանց քյոխվի տղի հետ շատ ա սիլի-բիլի անում: Էքսի օրը, որ քեռու հետ լուրջ լծած տանելիս են ըլլում, միանա յա անում, ասում ա.— Քեռի, ճիպոտը մտահան եմ արել, դու չուրթը քշե, ես գնամ բերեմ:

Եդ ա դառնում, գալիս ա կտրովը թաքուն անգաճ ա դնում, տենում ա հրե քյոխվի տղեն տանը, քեռեկնգա հետ փթաթորված, գրից են անում:

Քյոխվի տղեն ասում ա.— Բա հմի ես գնում եմ գութանը, ճաշին ո՞նց տինք իրար տենալ:

Ասում ա.— Դու քու տեղն ասա, ես կհագրեմ, լավ խորակ կեփեմ, կբերեմ:

Ասում ա.— Ես փլան հանդըմն եմ, ընդի մենակ մեր եզն ա չալ, Էնա չալ եզը կասես ու կգաս:

Եզանն էդքանն իմանում ա թե չէ, թողում ա, գնում քեռուն հասնում:

Գնում են ֆողը վարում, որ ճաշվա վախտը գալիս ա, ասում ա.— Քեռի ջան, ես շոքեցի, շաբիքս հանիլ տիմ:

Շաբիքը հանում ա ու եզան մեչկովը փթաթում, էդ վարում են: Հլե մին էլ տենում են, որ հրես քեռեկինը քրդնքամտած, էրկու ջուռա խորակը ջոգ-ջոգ ըմանում, բերուց: Գալիս ա ֆողի ծերը հասնում, որ տենում ա իրա մարթին ու եզանին ա թուշ էլել, մնում ա հուշ էլած, հմա են անսկամն ա, իրան կորցնում չի:

Եզանը վագրում ա աղաքը, ասում ա.— Ապրի քեռեկինս, մեզ հմար խորակ ա բերել, յավաշ մի քոմագ անեմ:

Գնում ա ձեռիցն առնում, բերում են բաց անում, տենում են մի ըմանում հավն ա չխրթմա արած, մի ըմանումն՝ ձվաձեղ:

Մարթն ասում ա.— Ա՛յ կնիկ, ես ո՞րդիան ես սրանք բերել, մեր քյասիբ տանը ըսկի չոր ու ցամաք հաց էլ չի կար:

Ասում ա.— Այ մարթ ջա՛ն, ըսօր վարթեվոր ա, խալխը չիմ ուրախանում են, ես էլ մի հավ ունեի պիած, ասի շինեմ, բերեմ ձեզ ուտացնեմ:

Մարթն էլ դե գլխի չի ըլլում, ուրխանում ա, նստում են կուշտ ուտում, դրաղ ըլլում: Նա նհե մրթշորված նստում ա, նստում, դարդակ ըմաննին վեր ա ունում փոր ու փոշման տուն գալի, էլ դարդակ ո՞ր էրեսով գնա սիրեկանի կուշտը: Էքսի օրը էդ քեռին ու եզանը եզնիքը լծում են, քշում դրա ֆողը:

Ճամփու կիսիցը եզանը էդ միանա յա անում, ասում ա,— Վո՛ւյ, քեռի ջան, ջնջիլը մտահան եմ արել, դու քշե, ես գնամ մի սհաթըմը բերեմ:

Գալիս ա եղ կտրիցն անգաճ ա դնում: Եղ տենում ա, որ սիրեկանը հրե տանը:

Քյոխվի տղեն ասում ա.— Էն խի՞ չի էրեկ էկար, աչկս ջուր կտրեց, չկելը ճամփա պիեցի:

Ասում ա.— Ես ի՞նչ անեմ, սիե՛-սիե՛:

Ասում ա.— Էդ էն փլված եգանի բաները կլին, հլբաթ գլխի յա էլել:

Հըմի էլ ասում ա.— Դե ըսօր կգաս, ես խնձորը կլպելով կգնամ, դու ըզովը կգդնիս:

Եգանը եղ անգաճ ա դնում, ըտի էնքան կենում ա, քյոխվի տղեն դուս ա գալի գնում: Դա թաքուն դրա եդնա խնձորի կլպնին հվաքելով, տանում ա իրանց ֆողի ճամփենին շաղ տալի, շաղ տալով գնում ա հասնում ֆողը:

Քեռին ասում ա.— Էդ խի՞ եղացար:

Ասում ա.— Քեռի ջան, քեռեկինն ըսօր էլ տի խորակ բերիլ, քոմագ անեի, դրա հմար եղացա:

Եղ իրանց վարն անում են: Մին էլ տենում են հրես քեռեկինը եղ քրդեքըմը մտած, էրկու ըմանըմը խորակը ձեռին, էկավ: Եգանը եղ վագ տալով գնում ա աղաքը, ձեռիցն առնում, բերում: Հմի էլ բրնձե փլավ ա ըլըմ բերած, մին էլ մեղրն ու կարագ: Դրանք ուտում են պրծնում, քեռեկինն ասում ա.— Դե ես գնում եմ խեչըմն ուխտ անեմ, գամ:

Նա հլե դարի քամակն ա անց կենում, եգանը քեռուն ասում ա.— Քեռի ջան, դու եզնիքը լձե, ես գնում եմ ջրվեթի:

Պատ ա տալի սարի քմակովը շուռ գալի, գնում խեչըմը տապ անում մի վենձ քարի տակի:

Քեռեկինը գալիս ա խեչը հասնում, լոքում ա սրփի քարերիցը պաչըմ, ասում ա.— Դուն իմ մուրագը տաս, էրեսըս ոտիդ տակը:

Քարի տակիցը եգանն ասում ա.— Ո՛վ սուրփի քրիստոնյա, ասա, մուրագդ տամ:

Դա հե գիդենում ա, թե խեչն ա իրա հետ խոսում:

Ասում ա.— Իմ մուրագն էն ա, որ եգանն ու իրան քեռին մեռնին, ես իմ սիրեկանի հետ հալալ սեր քաշեմ:

Ասում ա.— Հենց էս ըրիգու կգնաս տուն, քու սիրեկանը մի չալ եզն ունի, կասես բերի ձեր տանը մորթե, մի լավ դաուրմա կանես, եգանն ու իրա քեռին կգան կուտեն, դուք ձեր հալալ սերը կքաշեք:

Քեռեկինը ուրխանալով, եղ քարերից պաչելուց եղը խատատ-մատատ գալիս ա: Եգանն էլ եղ սարովը պատ ա տալի, գալի նրանից թեզ տեղ հասնում: Նա էլ գալիս ա ըմաննին վեր ունում, ուրխանալով գնում դբա տուն: Գնում ա գեղի դրաղին ճամփա պիւր, որ իրա սիրեկանը գա, խեչի ասածնին նրան էլ ասե, ըրիգունն էվետ թիեց անեն: Քյոխվի տղեն եղ օրն էլ որ տենում ա եկավ ոչ, դեռ հլա օր ա ըլըմ, գութանն աղաք ա անում, տուն գալի, որ ասե՝ ինձ քանի՞ խափես: Գալիս ա գեղի դրաղին նրանից իմանում ա վասմ ու հալը, էլ չըրանում չի, ինքն էլ ա ուրխանում, որ մթամ թե ամեն ցավից ու չոռից պրծնիլ տի: Ըտի էվետ չալ եզը վեր ա թողում, աղաք անում, բերում են, էն անսկամի հետ մորթում, մի լավ դաուրմա անում, որ գալ տին. մթամ ըրիգունը ուտեն, որ մեռնին:

Ըրիգնադեմ եգանը քեռուն ասում ա.— Ըրիգունը միս տինք ուտիլ, քեռեկինը մեզ հմար դաուրմա յա արել:

Ասում ա.— Ի՞նչ ես շաշ ու մաշ խոսում, տանն ի՞նչ ունինք, որ մեզ հմար դաուրմա անե:

Ասում ա.— Քեռի ջան, ըսօր դուն ինձ անգաճ արա, փոշմանիլ չես, ես ինչ կանեմ՝ դուն էլ արա:

Քեռին էլ դրան շատ ա սիրում, ասում ա.— Լավ:

Գալիս են գեղի դրաղը հասնում, ինքը մի վենձ քար ա վեր ունում, դնում ծոցըմը, քեռուն ասում ա.— Դե դուն էլ վի կալ:

Մինն էլ քեռին ա վեր ունում: Գալիս են տուն հասնում, էն քյոխվի տղեն էլ ծալքի տակին տապ արած ա ըլըմ:

Եզանն ասում ա.— Քեռեկին, էս ի՞նչ միս ա: Քեռին էլ ա եզանի պես հարց ըլըմ:

Էն անըսկամն ասում ա.— Աստոծ մեզ հմար մատաղ ա դըրգել, էկեք կերեք:

Եզանն ու քեռին նստում են, մի կուշտ ուտում, եղնա եզանն ասում ա.— Վա՛յ, քեռի ջան, էս մեռա:

Քեռին էլ ասում ա.— Վա՛յ, եզան ջան, էս մեռա:

Ասում են ու աչկներուն խուփ անըմ, կրավաթի վրա թոլ ըլըմ, սուտ մեռնուկի տալիս:

Քեռեկինն ուրխանում ա, հասնում ա ծալքը քանդում, սիրեկանի հետ փթաթորվում:

Սիրեկանը դուս ա գալի, ասում ա.— Դե՛ հմի սրանց տանինք ըռաղ անենք: Գալիս ա առաջ քեռուն մի քացի տալի, հմա ժած չի գալի:

Գնում ա հմի էլ եզանին ա քացի տալի, եզանը վրա ա նըստում, ասում ա.— Քեռի՛ ջան, էս սղացա:

Քեռին էլ ա վրա նստում, ասում ա.— Եզա՛ն ջան, էս էլ սղացա:

Եղնա քյոխվի տղեն վախելուցը եղիվոռ գնալիս տեղը եզանը ծոցիցը քարը հանում ա ու տալի դրա գլխովը: Քյոխվի տղեն թոլ ա ըլըմ, քեռին էլ իրա ծոցիցն ա քարը հանում, տալի գլխովը, դա ըտի ֆոքին տալիս ա, հանքչում:

Քեռին դեռ հլա գիդենում չի, թե դա քյոխվի տղեն ա. եփ որ տենում ա, ձեռները թիլանում ա, ասում ա.— Եզան, քու տունը չքանդվի, էս ի՞նչ օյին բերիք իմ գլուխը:

Ասում ա.— Դու վախիլ մի, քեռի ջան, էս սրան հենց կորցնեմ, որ իզն ու թոզն ըրեվա ոչ:

Հմա քեռեկինն ընդի՝ լիզուն լալկվել ա, մի բան էլա կարում չի խոսի, սփրթնած կագնել ա:

Եզանը գալիս ա էդ մեիդը շլակում, դուս տանում: Իրանց գեղըմն էլ մի ջղացպան ա ըլըմ, որ չկելը բողազը թաց չէին անըմ, սուփրա-սեղանով չէին ջաղացը գնում, ոչում հատիկ էլ աղում չի: Գնում ա դոնիցը ձեն տալի, ասում ա.— Դուռը բաց արա, հատիկ ունիմ աղալու:

Ջղացպանը ձեն չի հանում:

Մին էլ ասում.— Բա՛ց արա, հատիկ ունիմ աղալու:

Ջղացպանը, միջի կոնուց ասում ա.— Տո՛ շան տղա, քանի գլուխս ցվացնես, մի շուշա արաղըդ աչկերըս բռռացրել ե՞ն, որ վրես բոլթա էս անըմ:

Որ տենում ա բաց չի արավ (առանց էն էլ գիդեր, որ բաց չի անիլ), ասում ա.— Ջգրված եմ, բաց արա, թե չէ՝ իմ գլխին օղբաթ կբերեմ:

Ասում ա.— Քու հերն էլ անիծած, թե բերես ոչ:

Հլե էդ ասիլն ա տենում, հլե մին էլ տենում ա բխուրակի ծակովը մինը դվեր ընգավ:

Ջղացպանը որ գալիս ա տենում քյոխվի տղեն ըտի շունչը փչած հա, քար ա կտրում, ասում ա.—

Էս ի՞նչ օղբաթ էր, որ իմ գլխին էկավ, հմի էս ի՞նչ ջուղաբ տիմ տալ:

Եզանն էլ կտրիցը թաքուն մտիկ անելիս ա ըլըմ:

Դա որ շատ մտիկ ա անըմ, ասում ա.— Իմ վենձ բխուրակըմը ծածկեմ, չկել ըռավոդը տենանք ո՞րդի յա հարմար, տանինք թաղենք, թե չէ քյոխվի ձեռիցը պրծնողը չեմ: Բերում ա բխուրակըմը մոխիրը վրա տալի, պիւրմ:

Եզանը գնում ա տուն քեռուն ասում.— Դուն արխեին կաց:

Ըռավոդը լիսը բաց ա ըլըմ թե չէ, մի շուշա արաղ ա ջեբըմը դնում, էն եզան դաուրմիցն էլ մի աման լքցնում ա, մի անգամըն էլ հետը վեր ա ունում, խուրջինը լիքը հատիկը շլակում ա, տանում ա ջաղացը:

Խնթրելով ասում ա.— Ջղացպան ջան, ջղացպան, դուռը բաց արա, քեզ հմար արաղ եմ բերել, դաուրմա եմ բերել, մի անդամ եմ բերել, թող արա մի խուրջին հատիկս աղամ:

Ջղացպանը դռան ըրանքովը մտիկ ա անըմ, տենում ա, ըռիսի ջուրը վեր դառնալով բաց ա անըմ, դրան նի ա տանում: Տանում ա հատիկը վրեն ածում, գալի:

Եզանն ասում ա.— Ես միսւմ եմ, արի կրակ անենք:

Ջղացպանը մին սփրթնում ա, եդ-եդ ասում ա.— Բի պուճուր բխուրակըմը կրակ արա:

Ասում ա.— Իմ ջանը պուճուր բխուրակով գոլանալ չի, վենձըմը տիմ անիլ:

Ջղացպանը ջիգդան սփրթնում ա, ասում ա.— Չէ, պուճուրը վառե, վենձը խարաբ ա:

Ասում ա.— Տո ի՞նչն ա խարաբ, խարաբը ես կսարքեմ, թող վենձը վառենք, մի կրկենի էլ թխենք, ուտենք:

Ասում ա ու գնում վենձ բխուրակի մոխիրը եդ ա քաշում, տենում ա քոխսվի տղեն ընդի գոռած ա, ասում ա.— Էս ընչէ՞ր ես արել, սաղ գեղը ման ա գալի, թե էս ով ա սպանել Քոխսվի տղին:

Ջղացպանը լզիգոցն ա ընգընում, ասում ա.— Ինչ ուզես կտամ, ինձ ըռեխ մի տալ:

Ասում ա.— Սաղ գեղին թլանել ես, հմի էլ քոխսվի տղին ես սպանե՞լ, յավաշ, տես քու գլխին ինչ օյին կբերեմ, դուն էլ ինչ կտենաս:

Ջղացպանը դրա ոտներն ա ընգնում, դանչանք անում, ասում ա.— Ինձ ըռեխ մի տալ, իմ ունեցածի կեսը քեզ կտամ:

Եդնա գնում ա մի տոպրակ ոսկի պիած տեղիցը հանում, բերում ա տալի եզանին:

Եզանը վեր ա ունում, ասում ա.— Էս վեր կունիմ, հմա քեզ հետ պայման կանեմ, որ սրանից եղը թողուս խալիս բերեն իրանց հատիկն անհախ աղան ու տանին, որ մնիցը հախ ես վի կալել, կգնամ կասեմ, որ քոխսվի տղին դուն ես սպանել:

Իլլաջն ի՞նչ: Ջղացպանն ըռագի յա ըլում դրա պայմանին, դա ալիրն ու մի տոպրակ ոսկին վեր ա ունում, դուս գալի, գալիս ա տուն:

Ըրիգունը որ բանից պրծնում են, եզանը հացն ուտում ա ու մտնում տեղը: Տենում ա, որ քեռին ու քեռեկինը քշփչում են: Գլուխը կոխում ա յորդանի տակն ու սուտ քուն տալի, անգաճ ա դնում: Քեռեկինը մարթին ասում ա.— Սա մեր գլխին օղբաթ շատ տի բերիլ, հմի որ իմանան, գոնուն, ի՞նչ ջուղաբ տիս տալ:

Մարթն էլ գլխի չի, թե բանը ոնց ա, կնիկն էլ ստանա յա, մարթու աչկերը կապում ա, էն նաչարը բան չի գլխի էլած ըլում:

Մենակ վախիցը գիդե ոչ ինչ անե, ասում ա.— Ըսօր-էքուց ինձ բռնիլ տին:

Կնիկն ասում ա.— Ա՛յ մարթ, արի մեր էլած-չէլածը հվաքենք, էքուց ես էլ գաթա-մաթա կթխեմ, մեր ճամփու պաշարը հազիր կանեմ, քշերը թաքուն վի կենանք, մի տեղով գլուխներուս առնինք-կորչինք, թե չէ սա մեր գլխին օղբաթ տի բերիլ, ֆողով-ջրով կորցնիլ տի:

Մարթը միտկն ա անում ու կնգա խելքին ա ընգնում: Դրանք չիմ եզանն անգաճ ա դնում: Էքսի օրը, քեռեկինը եդ ա ունենում պիած, հանում ա գաթա թխում, հաց ա թխում, չիմ, ամեն ինչն էլ հազիր ա անում, մարթն էլ բերում ա մի վենձ քթոցում դասում, որ քշերը շլակի, ճամփա ընգնին: Ըրիգունը մթնում ա, եզանն ասում ա.— Էտ ո՞նց ա քնում չէ՞ ք:

Ասում են.— Քուններուս տանում չի, դու քընի:

Ասում ա.— Չէ՛, դուք էլ քնեցեք, որ իմ քունը տանի:

Դրանք էլ շորերներուն հանում են, մտնում տեղներուն, որ բալի խափեն քնացնեն: Եզանը տենում ա եդ դրանք քշփչում են, ասում ա.— Էլավ ոչ, ըտի մի բան կա, քնում չեք:

Կնիկը մարթի անգաճն ա մտնում, ասում ա.— Արի քնինք, բալի կարծիք չի անե, քշերվա կեսին որ որցակը կանչե, ես կգարթնիմ, էն վախտը դա խորը քնած կլի, կթողունք ու ճամփա կընգնինք:

Մարթն ասում ա.— Լավ էլ ասում ես, ես հլե շատ եմ բեզարել, մի քիչ աչկըս կպցնեմ, որ կարենամ եղբան բեռը տանիմ:

Դրանք քնում են, թե չէ, եզանը սուս ու փուս վեր ա կենում, բերում ա իրա տեղը մի քոթուկ ա դնում, էն քոթոցի գաթենին ու հացերն էլ դռդակում ա, շատը դես-դեն ա անում, իրա բերած էն մի տոպրակ ոսկին էլ հետը մտնում ա քոթոցի մեջը, եղնա մի քանի գաթա ու հաց էլ վրեն դասում: Քշերվա կիսին որցակը որ կանչում ա, կնիկը մարթին բոթում ա, ասում.— Քանի շնթռած ա, վեր կաց կորչինք:

Վեր են կենում, գալիս են տենում տեղը նհենց դմբուզ ա, էլ ձեռ չեն տալի, մարթը գնում ա անասա քոթոցը շլակում, ասում ա.— Այ կընիկ, էս ի՞նչ ծանդոն ա, էս ի՞նչ շատ ես թըխել: Կնիկն ասում ա.— Վայ տամ նրա գլխին, բա թողեի, որ նա գլխովե՞ր, գնա, բան չի կա, մեռնիլ չես:

Նաչարը տնքալով անասա դուս ա ըլում, կնիկն էլ եղնեն: Դրանք էդ մթնաքշերը ճամփա են ընգնում, գնում են, շատն ու քիչը իրանք գիդեն, գնում են հասնում մի գեղի դրաղ: Էդ գեղի շները դուս են դառնում, դրանցնի ըլում: Էդ նաչար մարթն էդ քոթոցը շլակին դես ա փետը պտըտում, դեն, իլլաջ չի ըլում, դրանց կալմեջ են արել, քիչ ա մնում հում-հում ուտեն:

Քեռին որ տենում ա իլլաջը կտրեց հա, ասում ա.— Վա՛յ մի եզանն ըստի դուս գա:

Եզանը քոթոցի միջիցը ձեն ա տալի, ասում ա.— Քեռի ջան, ես ըստի եմ, քոթոցը վեր դի:

Քեռին ու քեռեկինը մնում են ըրմացած, շներին էլ են մտահան անում, քոթոցը վեր ա բերում:

Եզանը դուս ա գալի, քեռու ձեռիցը փետն առնում ա, մին էս շանը, մին էն շանը, կլանչոցը գձելով հետ ա ածում: Դրանց թափում ա, էդ ընգնում են ճամփա: Գնում են հասնում մի վենձ ջրի դրաղ, ըստի ասում են.— Մի քիչ դինջանանք, բեզարել ենք:

Դինջանում են, հաց ու մաց են ուտում, եզանն ասում ա.— Քունս տանում ա, էկեք մի քիչ քնինք, լիսանա, լիսով կգնանք:

Եղնա ինքը սուտ քուն ա տալի, խորմփացնում:

Քեռեկինը մտնում ա մարթի անգաճը, ասում ա.— Արի սրան գձենք ջուրը, բալի պրծնինք, թե չէ սրանից պրծնիլ չկա:

Էդ վախտը եզանը կողքի վրա շուռ ա գալի:

Մարթը ձեռը դնում ա կնգա բերնին, ասում ա.— Սուս կաց, կիմանա, դեռ զարթուն ա:

Եղնա իրանք էլ խտոր են ընգնում, կնիկն ասում ա.— Դե քնի, եփ որ խորը քուն ըլի, քեզ իմաց կանեմ:

Էրկուսն էլ շատ բեզարած են ըլում, մի քիչ կենում են, էրկուսի քունն էլ տանում ա:

Եզանը վեր ա կենում, գնում ա քեռեկնգա գլխիցը կամաց էդ ա անում աղլուխը, կապում իրա գլխին, եղնա քեռու կոխկին բոթում ա, ասում.— Այ մարթ, այ մարթ, եզանը քնած ա, վեր կաց ջուրը գձենք:

Քեռին քնակոլով վեր ա կենում, գլխիցը մինն ա բռնում, ոտներիցն էլ մինը, գձում են ջուրը: Ջրումը նա մի էրկու ոլլուացնում ա, հմա ջուրը խեղդում ա, քշում ա տանում:

Եզանն աղլուխը գլխիցը էդ ա անում, ասում ա.— Քեռի ջան, էլ վախիլ մի, ամեն դարդից էլ պրծել ես: Քեռին մնում ա զարմացած:

Ասում ա.— Էլ զարմանալ մի, նա ուզեր ինձ ջուրը գձես, ես էլ ուզեցի նրան ջուրը գձենք, հմի ով դոչաղ էր, նա տարած ա, հմա մի օր էլ քու գլուխը տեր ուտիլ, թե ինձ ջուրն էիք գձել:

Ըստի նոր պատմում ա, թե ինչ թավուր ա էլել իրա քեռեկինը, եղնա վեր են կենում, քոթոցն ու էն ոսկին շլակում, ճամփա ընգնում: Գնում են տենում հրես մի հրսանքավոր զուռնա դիտով հարսն են տանում:

Եզանն ասում ա.— Ձեր տունը չքանդվի, ոսկին ջուրը տանում ա, դուք ըստի հարսի ալավովն եք էլել:

Ասում են.— Ո՞րդի ա, ո՞րդի:

Ասըմ ա.— Հրե էն կռան ձորըմը, մենք աման չունինք, թե շատ էինք վի կալել, գոռի քթոցն ու էս տոպրակն ենք լքցրել:

Եղնա մի քանի ոսկի էլ քթոցն ա ածած ըլըմ, ձեռը տանըմ ա քեռու շլակիցը հանըմ, շհանց տալի, տոպրակն էլ իրա ձեռին ա ըլըմ, էն էլ շհանց տալի: Հրսանքավորնու աչկերը չորս ա դառնըմ: Էլ տերտեր, էլ քոխվա, էլ հարուստ, էլ քյասիբ, չիմն էլ թողըմ են ու վազըմ դրա ձորը: Փեսեն էլ հարսին ա թողըմ, նրանց եղնա վազ տալի: Հարսը մնըմ ա մենակ, ձիու վրա նստած: Եզանն ասըմ ա.— Քեռի, էս հարսին որ նրանք թողին ու գնացին, որ ոսկի գդնուն բերեն, նրանք արժան չեն էս հարսին տիրանալու: Սա ա մեր իսկական ոսկին, վի կալ, տար, թող քու կնիկն ըլի, իմ էլ քեռեկինը:

Եղնա հարսի շորերը փոխիլ ա տալի, իրան շորերը նրան ա հաքցնըմ, նրանն էլ ինքն ա հաքնըմ, կոպին սագով գլխին դնըմ, տուլին էրեսին ա քաշըմ ու ձիուն վեր ըլըմ: Էն հարսն էլ էդ ուզեր, գոռով էն մարթի տված ըլըմ, ուրխանալով քեռու ձեռիցը բռնըմ ա ու ճամփա ընգնըմ: Հրսանքավորնին գնըմ են տենըմ ի՞նչ ոսկի, ի՞նչ բան, մի բան էլա կա ոչ: Փոր ու փոշման դրանց ուշուց տալով էդ են գալի: Գալիս են տենըմ հարսը դեռ հլա ձիու վրա՝ ճամփա յա պիւրմ, ճնաչըմ չեն, թե դա հարսը չի: Եղ իրանց գուռնադիտը դնգ-դնգացնելով, հարսին վեր են ունըմ, գնըմ իրանց գեղը: Սաղ գեղը հվաքվըմ ա թամաշա, ածըմ են, պար գալի, ուտըմ, խմըմ, հմի էլ հարսին տանըմ են օթախը, հրսանքավորնին էլ հվաքվըմ են գոմը, որ հմի էլ ընդի մի բոլ քեփ անեն, չկել լիսն ածեն-ուրխանան:

Խալխը որ ուտըմ, խմըմ են պրծնըմ հա, հմի էլ գուռնաչքերը մեյդան են բաց անըմ, որ պարի ածեն, պար գան խալխը: Հարսի օթախիցը չիմ կնանիքը գնըմ են, մնըմ են մենակ հարսն ու իրա տալը: Դրանք գրից են անըմ դեսից-դենից, եղնա տալն ասըմ ա.— Քու էդ սիրուն աչկերին մատաղ, հարսը ջան, դուն էդ ինչքան սիրո՞ւն ես:

Հարսը ասըմ ա.— Տալը ջան, դուն ինձանից սիրուն ես, ես էլ քու աչկերին մատաղ:

Ասըմ են ու իրար փթաթորվըմ, պչպաչորվըմ են: Եղնա տալն ասըմ ա.— Հարս ջան, էրնակ կամ ես տղա ըլեի, կամ թե չէ դու, սհե իրար սիրեինք ու ձեռնաբռնուկ անեինք, մի տեղի վրա փախչեինք:

Հարսն ասըմ ա.— Հմի որ աստուն աղոթք անենք, մնիս էլա տղա չի լինի՞լ:

Ասըմ ա.— Էրեսըս նրա ոտի տակը, ո՞ւր ա, թե տհենց բան աներ, ինչքան բախտավոր կլինք:

Եղնա եզանը մթամ թե աստուցն ա խնթրըմ, էրեսը մի էրկու հետ խաչակնքըմ ա, ասըմ ա.—

Տալ ջան, հրես աստոծ ինձ տղա շինեց:

Տալը վեր ա թռչըմ, դրան փթաթվըմ, ինքն էլ մի էրկու հետ աղոթքն ա անըմ, ասըմ ա.— Դե արի փախչենք:

Դրանք վեր են կենըմ, քանի խալխը գոմըմը հրսանքի ալավովն են էլած ըլըմ, դուս են գալիս ու փախչըմ: Գալիս են հասնըմ քեռուն ու թագա քեռեկնգանը, մի գեղըմ տուն-տեղ են դնըմ, ապրուստ անըմ, հալալ, նամուսով ապրըմ են, նամուսով էլ մեռնըմ: